ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան

«06» 10 2014թ. № 914-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ստանդարտների ազգային ինստիտուտ», փակ բաժնետիրական ընկերությանը նշանակել.

1) սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին՝ արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի հավելված 1-ում նշված տեխնիկական կանոնակարգերը՝ շնորհելով Ն-04(Հ-04)2014 նույնականացնող համարը:

2) փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին՝ արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի հավելված 2-ում նշված տեխնիկական կանոնակարգերը՝ շնորհելով Ն-05(Հ-05)2014 նույնականացնող համարը:

2. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը համապատասխանության գնահատման մարմին նշանակել 3 տարի ժամկետով:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ